ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» «07» 2025թ. N 50/745-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՎԹԱՐԱՅԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 41 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետի 17-րդ ենթակետով.

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի հայկական ատոմային էլեկտրակայանի վթարային հակազդման պլանը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեման՝ համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ղեկավար կազմի և ՀԱԷԿ-ին հարակից 10-կմ գոտու համայնքների ղեկավարների կապի և ազդարարման ցուցակը՝ համաձայն N3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի նախահարձակ պաշտպան միջոցառումների իրականացման (ՆՊՄԻ) և շտապ պաշտպանական միջոցառումների

պլանավորման (ՇՊՄՊ) գոտիներում վթարային հակազդմանը ներգրավվող կազմակերպությունների ցուցակը՝ համաձայն N4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ՀԱԷԿ-ին հարակից 10կմ գոտու բնակավայրերի բնակչության վահանաձև գեղձի արգելափակման հաշվարկը՝ համաձայն N5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի և վթարային հակազդման մարմինների ազդարարում կազմակերպելու կարգը՝ համաձայն N6 հավելվածի.

7) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (ՆՊՄԻ) և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման (ՇՊՄՊ) գոտիներում բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովման մասին հաշվարկը՝ համաձայն N7 հավելվածի.

8) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (ՆՊՄԻ) և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման (ՇՊՄՊ) գոտիներում բնակչությանն իրային ապահովման միջոցների՝ ըստ բնակավայրերի հաշվարկը՝ համաձայն N8 հավելվածի.

9) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (ՆՊՄԻ) և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման (ՇՊՄՊ) գոտիներից բնակչության տարահանման միջանկյալ կետերի հաշվարկը՝ համաձայն N9 հավելվածի.

10) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ՀԱԷԿ-ին հարակից 10 կմ գոտու բնակավայրերի բնակչության մինչև միջանկյալ կետեր տարահանման տրանսպորտային միջոցների և վառելիքաքսուքային նյութերի հաշվարկը՝ համաձայն N10 հավելվածի.

11) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ՀԱԷԿ-ին հարակից 10 կմ գոտու համայնքների տարահանվող բնակչության սանիտարական լվացման և տեխնիկայի ապաակտիվացման հաշվարկը՝ համաձայն N11 հավելվածի.

12) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (ՆՊՄԻ) և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման (ՇՊՄՊ) գոտիներում ոստիկանության և բժշկական հակազդման ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N12 հավելվածի.

13) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (ՆՊՄԻ) և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման (ՇՊՄՊ) գոտիներում հակահրդեհային ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N13 հավելվածի.

14) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հակահրդեհային ուժերի հաշվարկը՝ համաձայն N14 հավելվածի.

15) Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Արմավիրի մարզի տարահանվող բնակչության կենսապահովման հաշվարկը՝ համաձայն N15 հավելվածի.

16) ՀԱԷԿ-ում տեղի ունեցած ճառագայթային վթարի վերաբերյալ դասակարգված տեղեկատվություն ստանալու համար օգտագործվող ծածկագրերը՝ համաձայն N16 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի հայկական ատոմային էլեկտրակայանի վթարային հակազդման պլանը և Արմավիրի մարզային տարահանման հանձնաժողովի պլանը հաստատելու մասին» N41 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող՝
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-29 16:30:19 GMT+4
Հավաստվում է ԷԿԵՆԳ-ի միջոցով

Բ.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ